

«ԷՆԵՐԷՔՍ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽԱՐԱՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ
ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.


ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10

24.03.2025թ.
N

ՄԱՍՏՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Վահե Գևորգյան



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էներեքս» ՓԲԸ բաժնետերերին

Մենք առաջիտի ենք ենթարկել «Էներեքս» ՓԲԸ (Ընկերություն) և նրա դուստր բնկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք առաջիտն անցկացրել ենք առաջիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Առաջիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների առաջիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր առաջիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված առաջիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՏՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմի ոգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օդակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Մեդրակ Բադայան

Աուդիտոր

24 մարտի 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	11,444	13,417
Ոչ նյութական ակտիվներ		374	-
Հետաձգված հարկային ակտիվներ	5	1,623	957
Բանկային ավանդներ	7	60,414	64,497
		<u>73,855</u>	<u>78,871</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Տրված փոխառություններ		-	81,010
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	338,786	135,302
Բանկային ավանդներ	7	197,618	5,505
Մնացորդներ դրամարկղում և բանկերում		133	157
		<u>536,537</u>	<u>221,974</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>610,392</u>	<u>300,845</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>	8		
Բաժնետիրական կապիտալ		10	10
Կուտակված շահույթ		53,385	46,313
		<u>53,395</u>	<u>46,323</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	9	96,236	-
		<u>96,236</u>	<u>-</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	9	1,380	5,703
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	456,140	240,767
Շահութահարկի գծով պարտավորություն		3,241	8,052
		<u>460,761</u>	<u>254,522</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>610,392</u>	<u>300,845</u>

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մարտի 24-ին:

Գազիկ Մարգարյան

Մանե Դանիելյան

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

1-23 ԾԱՆՈԹԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԿԱԳՈՐԾՆԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՐԱՅՈՒՄՆԵՐԸ



ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	11	4,207,125	1,661,925
Վաճառքի ինքնարժեք	12	(4,099,265)	(1,549,471)
Համախառն շահույթ		107,860	112,454
Այլ եկամուտ		1,629	161
Իրացման ծախսեր	13	(30,650)	(19,862)
Վարչական ծախսեր	14	(71,389)	(38,599)
Այլ ծախսեր		(4,247)	(6,015)
Գործառնական գործունեությունից շահույթ		3,203	48,139
Ֆինանսական եկամուտ	15	21,425	13,147
Ֆինանսական ծախս	15	(14,981)	(5,726)
Շահույթ մինչև հարկերը		9,647	55,560
Շահութահարկի գծով ծախս	16	(2,575)	(10,628)
Տարվա շահույթ		7,072	44,932
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		7,072	44,932

1-23 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	10	25,381	25,391
Տարվա շահույթ	-	44,932	44,932
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	44,932	44,932
Շահաբաժիններ	-	(24,000)	(24,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(24,000)	(24,000)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10	46,313	46,323
Տարվա շահույթ	-	7,072	7,072
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	7,072	7,072
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10	53,385	53,395

1-23 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	7,072	44,932
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,330	2,000
Ֆինանսական եկամուտ	(21,425)	(13,147)
Ֆինանսական ծախս	14,981	5,726
Շահութահարկի գծով ծախս	2,575	10,628
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	5,533	50,139
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(203,484)	(79,392)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	236,973	99,397
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	39,022	70,144
Վճարված տոկոսներ	(13,601)	(4,291)
Ստացված տոկոսներ	8,808	4,537
Վճարված շահութահարկ	(8,052)	(9,422)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	26,177	60,968
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրված փոխառություններ	81,010	6,395
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(731)	-
Բանկային ավանդներ	(175,413)	(60,462)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(95,134)	(54,067)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից, փոխառություններից մուտքեր/(ելքեր)	90,533	(4,555)
Վճարված շահաբաժիններ	(21,600)	(2,400)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	68,933	(6,955)
Դրամարկդում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(24)	(54)
Դրամարկդում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	157	211
Դրամարկդում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	133	157

1-23 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Էներքս» ՓԲԸ (այսուհետ՝ «Մայր ընկերություն») և վերջինիս կողմից 100% մասնակցությամբ դուստր ընկերության՝ «Էներգեն» ՍՊԸ (միասին այսուհետ՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

Մայր ընկերության բաժնետերերն են՝ «Շուիգեն» ՍՊԸ-ն՝ 90% բաժնեմասնակցությամբ և ՀՀ քաղաքացի Գագիկ Մարգարյանը՝ 10% բաժնեմասնակցությամբ (տես՝ ծանոթագրություն 8):

«Էներքս» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2001թ.-ին, իսկ «Էներգեն» ՍՊԸ-ն՝ 2002թ.-ին:

Խումբը մեծածախ առևտրի գործունեություն է ծավալում էլեկտրաէներգետիկայի ազատականացված շուկայում, հնարավորություն ունենալով ներկրել էլեկտրաէներգիա Հայաստանի տարածք և արտահանել Հայաստանի տարածքից դուրս, ինչպես նաև իրականացնել մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի վաճառք:

Խումբն ունի սովյալ գործունեությունն իրականացնելու համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի համապատասխան լիցենզիաներ:

Մայր ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Եկմայրան փող. 6:

Գործարար միջավայր

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում սրվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ առումով:

2024թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և

վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում» ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- «Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ» (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- «Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում» (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ» (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում», փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից: Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

«Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ)

ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր դուստր ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմաբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.3 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունն աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերումը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.4 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին գրանցվում են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարվում են:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.6 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում էլեկտրաէներգիայի իրացումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-րդ պիլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ

	Տրանսպորտային միջոցներ	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	16,000	-	16,000
Ավելացում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,000	-	16,000
Ավելացում	-	281	281
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,000	281	16,281
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	583	-	583
Տարվա հաշվարկ	2,000	-	2,000
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,583	-	2,583
Տարվա հաշվարկ	2,000	254	2,254
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,583	254	4,837
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,417	-	13,417
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,417	27	11,444

Հիմնական միջոցների մաշվածության ծախսն ամբողջությամբ բաշխվել է վարչական ծախսերին՝ 2,254 հազար դրամ (2023թ.՝ 2,000 հազար դրամ):

Խմբի հիմնական միջոցներում 31 հազար դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ հաշվառվում են գրո հաշվեկշռային արժեքով (2023թ.՝ գրո):

Խմբի հիմնական միջոցներում ներառված HOZON NETA U PRO մականիշի ավտոմեքենան՝ 16,000 հազար դրամ սկզբնական արժեքով, գրավադրված է «Արմավիրսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկի գծով ապահովման միջոց (տե՛ս ծանոթագրություն 9):

5 ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	957	-
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 16)	666	957
Տարեվերջի մնացորդ	1,623	957

Հազար դրամ

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Փոխհատուցումներ աշխատակիցներին	957	666	1,623
	957	666	1,623
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	957	666	1,623

Հազար դրամ

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Փոխհատուցումներ աշխատակիցներին	-	957	957
	-	957	957
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	957	957

6 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	324,298	134,532
	324,298	134,532
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	6	8
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	9,482	-
Այլ	5,000	762
	14,488	770
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	338,786	135,302

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 28 օր (2023թ.՝ 20 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

7 ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Հազար դրամ

Արմավիրսի ֆԲԸ
«Էներգա» ՓԲԸ

Ավանդ D109945-01	Դրամ	1/20/2023	1/30/2026	9.50%	40,415	3,398	4,234
Ավանդ D109945-02	Դրամ	1/20/2023	2/20/2024	10.50%	-	-	-
Ավանդ D109945-03	Դրամ	1/20/2023	2/20/2024	10.50%	-	-	-
Ավանդ D109945-04	Դրամ	12/21/2023	1/15/2026	9.75%	20,000	2,014	1,955
Ավանդ D109945-05	Դրամ	2/23/2024	3/4/2025	10.00%	20,000	1,715	1,715
Ավանդ D109945-06	Դրամ	5/22/2024	6/10/2025	9.75%	20,000	1,197	1,197
Ավանդ D109945-07	Դրամ	6/20/2024	7/14/2025	9.75%	20,000	1,042	1,042
Ավանդ D109945-08	Դրամ	7/23/2024	8/12/2025	9.75%	20,000	865	865
Ավանդ D109945-09	Դրամ	8/23/2024	11/24/2025	9.75%	60,000	1,136	1,973
Ավանդ D109945-10	Դրամ	9/19/2024	10/22/2025	9.75%	45,000	1,250	1,250
«Էներգեն» ՍՊԸ							
Ավանդ	Դրամ	10/21/2022	3/15/2024	13.75%	-	-	110
					245,415	12,617	14,341

Հազար դրամ

2023թ. դեկտեմբերի 31-ի
դրույթամբ

Արմավիրսի ֆԲԸ

Ավանդ D109945-01
Ավանդ D109945-02
Ավանդ («Էներգեն» ՍՊԸ)

Արժույթ	Ավանդի սկիզբ	Մարման ժամկետ	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	Տոկոսային եկամուտ
Արմավիրյանի ՓԲԸ						
Ավանդ D109945-01	1/20/2023	1/30/2026	9.50%	40,415	3,062	3,771
Ավանդ D109945-02	1/20/2023	2/20/2024	10.50%	20,000	1,020	3,202
Ավանդ («Էներգեն» ՍՊԸ)	10/21/2022	3/15/2024	13.75%	5,057	448	448
				65,472	4,530	7,421

8 ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

8.1 Բաժնետիրական կապիտալ

	Բաժնետոմսերի քանակ	Բաժնետիրական կապիտալ, հազ. դրամ
«Շտիգեն» ՍՊԸ	900	9
Գազիկ Մարգարյան	100	1
	1,000	10

9 ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված բանկային վարկեր	-	5,703	-	-
Կապակցված կողմերից փոխառություններ	1,380	-	96,236	-
	1,380	5,703	96,236	-

Կապակցված կողմերից ստացված փոխառությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Գումար	Մարման Ժամկետ	Տոկոսա դրույք, %	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
				Մայր գումար	Հաշվե- գրված տոկոս	Տոկոսա- յին ծախս
Փոխառություններ						
"Շտիգեն" ՍՊԸ	500,000	4/19/27	13.75%	96,236	73	1,488
Գազիկ Գյուլբուդաղյան	40,000	9/30/24	15.00%	-	-	781
Վաչագան Նազարեթյան	21,000	9/30/24	15.00%	-	-	415
«Էդվանստ Այթի Տեքնոլոջիս» ՍՊԸ	120,000	12/13/24	12.50%	-	-	3,329
Վարկ						
«Արմավիսբանկ» ՓԲԸ	9,500	10/18/24	14.00%	-	-	311
Բանկային երաշխիք						
«Արմավիսբանկ» ՓԲԸ			1-3%	-	1,307	8,657
				96,236	1,380	14,981

Հազար դրամ

	Գումար	Մարման ժամկետ	Տոկոսա դրույք, %	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
				Մայր գումար	Հաշվե- գրված տոկոս	Տոկոսա- յին ծախս
Վարկ						
«Արմավիսբանկ» ՓԲԸ	9,500	10/18/24	14.00%	4,268	1,344	2,317
Բանկային երաշխիք						
«Արմավիսբանկ» ՓԲԸ			1-3%	-	91	3,409
				4,268	1,435	5,726

Մայր ընկերության և «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի միջև 2022թ. փետրվարի 22-ին կնքած վարկային պայմանագրով բանկը տրամադրել է 1,000,000 հազար դրամ սահմանափակ վարկերի և վարկային գծի հնարավորություն՝ մինչև 2042թ. մարման ժամկետով: Առկա վարկն ապահովված է Խմբի հիմնական միջոցներով (տես ծանոթագրություն 4) և դուստր ընկերության բաժնեմասով:

10 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	437,345	208,085
Հատուցումներ աշխատակիցներին	9,184	5,414
Պարտավորություններ բաժնետերերին	-	21,600
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով	9,580	5,654
Այլ	31	14
	456,140	240,767

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 39 օր (2023թ.՝ 49 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

11 ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլեկտրական էներգիայի իրացում	4,060,397	1,631,216
Հզորության իրացում	146,728	30,709
	4,207,125	1,661,925

12 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլեկտրական էներգիայի ինքնարժեք	3,956,299	1,520,840
Հգործության ինքնարժեք	142,966	28,631
	<u>4,099,265</u>	<u>1,549,471</u>

13 ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	30,356	19,589
Այլ	294	273
	<u>30,650</u>	<u>19,862</u>

14 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	44,565	26,706
Հարկերի գծով ծախսեր	17,218	3,205
Բանկային ծախսեր	2,669	3,265
Մաշվածություն և ամորտիզացիա	2,330	2,000
Գործուղման ծախսեր	1,637	-
Առևտրի և խորհրդատվության ծախսեր	1,200	2,733
Այլ	1,770	690
	<u>71,389</u>	<u>38,599</u>

15 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	(6,324)	(2,317)
Բանկային երաշխիքներից տոկոսային ծախսեր*	(8,657)	(3,409)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(14,981)	(5,726)
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	14,341	7,421
Բանկային հաշիվների մնացորդներից տոկոսային եկամուտ	18	10
Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններից տոկոսային եկամուտ	7,066	5,716
Ընդամենը ֆինանսական եկամուտ	21,425	13,147
Զուտ ֆինանսական եկամուտ	6,444	7,421

* Բանկային երաշխիքներից տոկոսային ծախսերի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 20-ում:

16 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	3,241	11,585
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթ. 5)	(666)	(957)
	2,575	10,628

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՀՀՄՄ)	9,647		55,560	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%) (Չհարկվող եկամուտ)/	1,736	18.0	10,001	18.0
չնվազեցվող ծախսեր, զուտ	839	8.7	627	1.1
Շահութահարկի գծով ծախս	2,575	26.7	10,628	19.1

17 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**17.1 Էական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

*Ֆինանսական ակտիվներ**Հազար դրամ*

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	324,298	134,532
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	133	157
Բանկային ավանդներ	258,032	70,002
Տրված փոխառություններ	-	81,010
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	582,463	285,701

*Ֆինանսական պարտավորություններ**Հազար դրամ*

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	96,236	-
Ընթացիկ վարկեր և փոխառություններ	1,380	5,703
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	446,529	213,499
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	544,145	219,202

18 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ**ա) Հուկայական ռիսկ**

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է հուկայական ռիսկի, հատկապես՝ տոկոսադրույթային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Տոկոսադրույթային ռիսկ

Խումբը ենթարկվում է տոկոսադրույթային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույթներով փոխառու միջոցներ: Խումբն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույթով փոխառու միջոցներ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները:

Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույթով	Ընդամենը
<i>Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ (%)</i>		14%	
Մինչև 6 ամիս	446,529	690	447,219
6 ամսից մինչև 1 տարի	-	690	690
1-5 տարի	-	96,236	96,236
	446,529	97,616	544,145

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույթով	Ընդամենը
<i>Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ (%)</i>		14%	
Մինչև 6 ամիս	213,499	5,703	219,202
	213,499	5,703	219,202

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական

միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը զգալիորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերին:

19 ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿ

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Զուտ պարտք</i>		
Փոխառություններ	97,616	5,703
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(133)	(157)
	97,483	5,546
<i>Ճշգրտված սեփական կապիտալ</i>		
Ընդհանուր սեփական կապիտալ	53,395	46,323
	53,395	46,323
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	1.83	0.12

20 ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.1 Իրավական պարտավորվածություններ

Խումբն իր առևտրային գործունեությունը ծավալելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 25-ի թիվ 516-Ն որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով:

Վերը նշված կանոնների համաձայն, Խումբը պարտավոր է շուկայի օպերատորին ներկայացնել Հայաստանում գործող որևէ առևտրային բանկի կողմից տրամադրված երաշխիք: «Արմավիսբանկ» ՓԲԸ կողմից Խմբին տրամադրված բանկային երաշխիքի գումարը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 499,000 հազար դրամ, իսկ դրա գծով տոկոսային ծախսը՝ 8,657 հազար դրամ (2023թ.՝ 3,409 հազար դրամ) (տես ծանոթագրություն 15):

21 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՅՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Խմբի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Փոխառություններ
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	8,823
<i>Դրամային հոսքերից</i>	
Մարումներ	(4,555)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	
Տոկոսի հաշվեգրում	1,435
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,703
<i>Դրամային հոսքերից</i>	
Ստացված գումար	935,048
Մարումներ	(843,080)
Վճարված տոկոսներ	(1,435)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	
Տոկոսի հաշվեգրում	1,380
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	97,616

23 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

23.1 Վերահսկողություն

Մայր ընկերության բաժնետերերն են՝ «Շուիգեն» ՍՊԸ-ն (90% բաժնեմասնակցություն) և ՀՀ քաղաքացի Գագիկ Սարգսյանը (10% բաժնեմասնակցություն):

23.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ**Գործարքներ**

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայր ընկերություն		
Տրված փոխառություններ	2,729,294	1,159,712
Տրված փոխառությունների մարում	(2,806,213)	(1,166,107)
Տոկոսային եկամուտ	7,066	5,716
Շահաբաժնի վճարում	(21,600)	(2,400)
Ստացված փոխառություններ	(754,048)	(514,538)
Փոխառությունների մարում	657,812	514,538
Տոկոսային ծախս	(1,488)	-
Դուստր ընկերություն		
Տրված փոխառություններ	3,744	2,610
Տրված փոխառությունների մարում	(4,218)	-
Տոկոսային եկամուտ	1,093	448
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ստացված ծառայություններ	(64)	-

Մնացորդներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր ընկերություն		
Տրված փոխառություններ	-	76,919
Ստացված փոխառություններ	(96,236)	-
Դուստր ընկերություն		
Տրված փոխառություններ	8,646	9,120

23.3 Գործարքներ դեկավարության հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մայր ընկերության տնօրենը Խմբի բաժնետիրական կապիտալում ունի 10% բաժնեմասնակցություն:

Հիմնական դեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	21,239	18,100